

Հ. Ս. Ս. Ե

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները
ես չե՛ն տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր հաւանայնութեամբ :

Քարտէզային արտոճութիւն
ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ՊԱՏՄԱՆՔ

ԵՂԻՇԷ

Տարեկան գրե. ուղ. 30

ԱՐՄԱՍՏՄԱՆ

Տարեկան գրե. ուղ. 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍԺ ԳԵՐՈՒ ՎԵՐԱԿԵՆ
ՎԵՐԱԿԵՆ ԳԵՐՈՒ ՎԵՐԱԿԵՆ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Ք

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքինական խնդրոց հարևար
պէտք է դիմել ներքին գործերի նախարարին
ընդհանուր մասնախարարին, որ է՛

ԳՐՈՐԻ ՓՈՒՓՈՋՆԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱԿՈՒԻ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղարկել պատասխանա-
տու են ինչպէս զգածներու

ZUSC 20 ՓԱՒԱ ՈՂՁ

Չ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ

Յօդուածագիրներէն յատկապէս
կը խնդրուի իրենց գրութիւններուն
մէջ յատուան բացատրութիւններէ
զգուշանալ և պատշաճութեան սահ-
մաններէն չի չեղել, եթէ չեն ուզեր
որ իրենց աշխատութեան արդիւնքը
ըյս անհետ իրաւունքէն չ'զրկուի
ԽՄԲ.

ՀՈԳԻՆԵՐՈՒ
ԱՅԼԱՆԴԱԿՈՒՄԸ

Աւերիկայ հրատարակող Ա.Գ.Գ.
Շարքարտերէն կ'արտատրուի ներսե-
ւայ ներքինական յօդուածը, որ ոչ
միայն արտաքին գրչին հոգեկան կո-
րովը ի վեր կը հանե, այլ և աշ-
տակալն ու « բարոյակոյ » դասեր
ունի իրեն մէջ :

Բանի մը կ'ուն բացարձակու-
մեր, որովք բերեալ ուրիշի մը գրչին
սակ աշխարհի շահեկան յօդուածի մը
մէջ տարբեր տարբեր հարցերով մեղմա-
լի պիտի լինին, մեկն չեն կրնար
ընկեր ի յարգանս. բաւ է որ պատ-
կերք բուն իրականութեան առնուած
է և հասկնալ ուղղութեամբ հարևար
նշխարարութեան կ'ուշադրուի :

Ամիսներ առաջ, յեղափոխական
հեղինակաւոր ընկեր մը կը գրէր մե-
ղի. « կուսակցական ամէն մտայնութե-
անը և սոցիալականութեան մէջ՝ բուն
պատասխանատուները մէկ քանի ան-
հատներ են, մնացեալները իրենց
անդիտակցութեամբ կամ հետեւողա-
կանութեամբ կը խաբուին անոնցմէ,
որոնք գիտեն օգտուիլ անմեղներէն
ու միամիտներէն և չարաչար գոր-
ծածել անոնց վտանգութիւնը » :

Եթէ այս խօսքերուն խապու-
ցած իմաստը կարենայինք գաւանիլ
իբրև բացարձակ ճշմարտութիւն, մե-
ղի համար տեսակ մը սիրտանք պի-
տի ըլլար ատիկա, ներկայ հանգա-
մանքներու մէջ :

Իժարագաւար, մեր աչքերուն
տուշե պարզուող փաստերն ու երե-
ւոյթները մեղի թոյլ չեն ի տար
տեսութեան բոլորովին համոզուելու
և զայն անվերապահօրէն բաժնելու
Իրա՛ւ է, թէ « մէկ քանի ան-

հատներ են » գլխաւոր պատասխա-
նատուները, աւելի որոշ պիտի ըլլար
ըսել՝ հեղինակները կամ ստեղծիչ-
ները չարիքին, զոր կը տեսնինք մեր
զիմացը :

Բայց չենք կրնար ինքզինքնիս
արդիւնք միանգամայն նկատել, թէ
« այդ մէկ քանի անհատները » պի-
տի անկարողութեան մասնուէին ի-
րենց չարագործութեանը մէջ - գէթ
պիտի վերածուէր, սահմանափակուէր
իրենց գործած չարիքը - եթէ այս-
քան յօժարակամ մեղաւորութիւն-
ներ ու ձեռնառու կամակատարու-
թիւններ չի գտնէին պատրաստ ի-
րենց և իրենց անարգ ծրագրիւն-
րուն ի սպաս :

Իրա՛ւ է, թէ « մէկ քանի ան-
հատներ » պատճառ ու աղբիւր կըլ-
լան, ընդհանրապէս հանրային չա-
րիքներու, և շատեր, անդիտակցա-
բար կը հետեւին, կ'ենթարկուին ա-
նոնց :

Բայց երբ չարիքը երևան կու-
գայ, իր բովանդակ խժժութեամբ
ըր, երբ անոր շուրջ ամէն բան կը
պարզուի, կ'ապացուցուի, աներկ-
բայելի ու անվիճելի ստուգութեամբ
մը, - ի՞նչպէս արդարայնել, կամ
բացատրել, պարզապէս անոնց, ո-
րոնք տակաւին կը յամառին ավ-
աչկարա ճշմարտութեան դէմ, կուր-
օրէն կուրանան զայն, ու ոտրիւրէն
կը կառչին չարագործներու գարշա-
պարին, կ'որդեգրեն անոնց կորու-
ւած դատը և կը դիւրացնեն անոնց
օրհասական ճիգերը չարիքը յաւեր-
ծացնելու :

Եւ ասիկայ է արդէն բուն չա-
րիքիքը, իր ամենէն դժբնդակ
ձևին ու ահաւոր համեմատութեամբ
մէջ : Իրեային գործն է ատիկայ, զոր
կը տեսնեն կոր չարիքին քրմապետ-
ները, և որուն դէմ բան մը չի կըր-
նալ ընելու գիտակցութիւնը պիտի
ընկճէր, յուսահատեցնելու ամենէն
լաւատեսներն անգամ :

Հոս, պատճառ մը հացի փոխարէն
խղճման մը կը գտնեն, հոն փա-
ռատութիւններ շոյելով մեղաւորից-
ներ կ'ապահովեն, անդին ունայնա-
մտութիւններ գգուելով և ստրուկ
ընաղըներ գրգռելով գործիքներ կը
տրամադրեն :

Եւ ահա ահուելի բանը կը կա-

տարուի - հողիներու այլանդակու-
մը . . . :

Իժմքերը կը ծամածոնին, նայ-
ուածքները կը շեշտան, սիրտերը կը
թունոտին, բերանները կը փոխուին
մէկ օրէն միւսը :

Տեսէ՛ք ի՞նչպէս կ'իւրացնեն,
իրենցը կ'ընեն ուրիշներուն - Չարիքը
ծնող « մէկ քանի անհատներ » ուն -
կիրքերն ու ատելութիւնները :

Ի՞նչ պատահեր է սա գառնուկի
պէս տղուն, որ չորս դիէդ կը մա-
յէր, բայց որ այսօր երեսդ չի կրնար
նայիլ շիտէ շիտակ, և գայլի ակոյց
ցուցնել կը փորձուի ետեւէտ : Ի՞նչ է
ցաւը սա միւսին, որ քեղ չի ճանչ-
նար, բայց որ քու մասիդ, և քու
ամէն մասիդ, վրայ ուրիշներէն - Չա-
րիքը հարկադրող « մէկ քանի ան-
հատներէն » - լսածները կ'երթայ
թուրակորէն և քսուօրէն զլուցել,
կրկնել յեղեղել, հանդիպող ու չի
հանդիպող տղուն, մաղուն ու նոյն
խակ կնկան : Ու դեռ ի՞նչ ըսել բո-
լոր անոնց, որոնք առանց համոզու-
մի, առանց հիւշելի չափ փաստի վը-
րայ կարենալ կրթնելու, բայց ամ-
չնալ ու խղճահարել չի գիտող թա-
խանձանքով մը՝ « սո՛ւտ է, սո՛ւտ է »
կը պօռան, կը ճրւան ճշմարտու-
թեան հասցին, չարիքն ու չարա-
գործները պաշտպանած ըլլալու
մարդամեքենական պարտակատա-
րութեամբ մը :

Միամիտ մտւորածներ, մոլե-
ռանդ հաւատացողներ չեն ասոնք,
ամենքն ալ :

Երանի՛ թէ այսպէս ըլլային.
այն ատեն արգահատանքով ու նոյն
խակ տեսակ մը զթոտ խանդաղա-
տանքով պիտի նայէինք իրենց վրայ,
անդրդուելիւրէն համոզուած՝ թէ
անոնք օր մը պիտի չարաչար հիսա-
թափուէին իրենց այսօրուան կար-
ծեցեալ գիտովութիւնէն :

Բայց ասոնք գիտեն, թէ ի՞նչ
կ'ընեն : Ասոնցմէ շատերուն « գործին
կուգայ » խաբուած ու մոլեռանդա-
ցած կարծուելը, որովհետեւ ատիկա
անկեղծութեան մեղմացուցիչ երեւոյթ
մը պիտի տար իրենց ճակատի կեղ-
ծիքին :

Ու չկայ աւելի պժգալի, աւելի
քստմեղի պատկեր, քան անկեղծու-
թեան դիմակով կեղծիքները :

Այլանդակուած այս հողիներ-
րուն համար անդիտակցող զոհի խօս-
քը անհարկի է : Անոնք շատ աղէկ
հասկցած են չարիքն ու չարագործ-
ները, որոնց կը սպասարկեն : Անոնց
գլխաւոր մտահոգութիւնը իրենց
յատկացուած անակնկալ գերբուն
կատարումն է յաճախ, որուն համար
ամէն ստորնացում, ամէն անխղճու-
թիւն, ամէն սողոկում յանձն պի-
տի առնելն խանդախտութեամբ :
Ի հարկին՝ պիտի չի վարանէին իսկ
կոխել, ցատկել՝ ներքնապէս իրենց
անպարտ հաւատացած մարդերու դի-
ակներուն վրայէն . . . :

Չարիքին ասպետներն ալ շատ
աղէկ հասկցած են զիրենք և իրենց
ստրկամիտ տիրացութիւնը : Անոնք
դժուարութիւն պիտի չի կրէին, ան-
չուշտ, ապականելու, այլանդակելու
այնքան հողիներ, որքան պէտք պի-
տի ըլլար իրենց հրէշաւոր գործին .
. . . բերէ՛ք սա խնկոտը, տեսնենք -
ատոր երազէ՞ն կ'անցնէր գեղեցիկ օր
մը ինքզինքը « խմբագրի » մորթին
մէջ գտնել . բերէ՛ք սա միւս լը-
լէզը, - ատոր ալ « գործիչ » ի, « ներ-
կայացուցիչ » պաշտօն մը կուտանք .
. . . Եւ ահա՛, այս առձեռն մէթո-
տով, եթէ կուզէք, տասնեակներով
բերաններ ու հարկերներով մատու-
ներ կուտանանք մեր սրամաղրու-
թեան տակ . . . :

Այսպէս կը կատարուի հողիներ-
րու բարոյական կաշառումը, ապա-
կանումը, այլանդակումը, - Տղաք-
ներ, որոնք թերևս պիտի կրնային
աղիւ ու օգտակար մարդիկ ըլլալ
օր մը, եթէ իրենց համեստ սահմա-
նին մէջ թողուէին հետեւի իրենց
բնական ճակատագրին, կ'այլասերին,
կը հրէշանան, կը փճանան . . . :

Եւ ժողովուրդի մը մէջ, ուր
ամենայնպէս տիրացուն ալ մէկ ու
կէս մարդ կը գտնէ իրեն խօսքին
անսացող, ուր խնայական ու հէմ-
չէրիական առնչութիւնները, շատ ան-
գամ, գաղափարի ու դաւանանքի
կապերու տեղ կը բռնեն, այս սխա-
թմը կրնայ տակաւին յաջողիլ, գէթ
զայն կիրարկողներու գոյութիւնը
քաջութելու բաւականացալի :

Կուսակցական մոլորումներու և
սոցիալականութեան պատասխանատու-
ները « մէկ քանի անհատներ » կ'ըլ-


լան, այո՛, մինչև հո՛ն, ուր սխալը կամ չարիքը իբրև կատարած իրողութիւն կը ցցուի ամենուն առջև մերկապարանոց:

Ատկէ անդին և ատկէ վերջ, պատասխանատուութիւնները կը տարածուին ու կը ծանրանան բոլոր անոնց վրայ, որոնք այդ « մէկ քանի անհատներուն » գիտակցաբար կը մեղաւկցին, և անոնց գործիք ու նեցուկ կը դառնան, հակառակ և ընդդէմ աչք պատուտող բոլոր իրողութիւններուն, որոնք բարձրաձայն կը սպառնան զիրենք կանխաւ շիտակութեան դէմ մեղանշող իրենց ընթացքին համար:

Այս վերջինները, երբեմն, աւելի դատապարտելիօրէն պատասխանատու են, որովհետեւ իրենց գիտակցից մեղաւկցութեամբ պարագլուխ չարագործները կը մղեն կորսուած մարդու իրենց գերագոյն ու խելագար խաղբութիւններուն: Աւելի դատապարտելիօրէն պատասխանատու, այլ մանաւանդ աւելի ատելի ու արհամարհելի ին ասոնք: — Ու որքան տեսնուի և կը տեսնուի դեռ այս տեսակէն պատասխանատուներ, զորս կարելի չէ այլ ևս չբնորոշել, « մէկ քանի անհատներ » ու անգիտակցից կամ հետեղական զոհերը նկատելով զանոնք:

Այլապէս, պէտք պիտի ըլլար ընդունել թէ այդ « մէկ քանի անհատներ »-ուն գործած ու գործելիք բոլոր չարիքներուն մեծագոյնն ու ամենէն անդամանելին է — Հողիւնեայս այլանդակումը:

ԿԵԱՆԻՐԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՉ



Գ.

Իսկ արդի՞ Գահիրէն:

Ճիշտը բնիկով տարօրինակ տպաւորութիւն մը կը ձգէ նորեկին վրայ, որովհետեւ քաղաքին երկու երրորդական թաղերը — Իսմայիլիէն և Թէվֆիքիէն — երրորդական քաղաքներ են բառին ամենէն լայն իմաստովը, իրենց սիրուն պանդոկները, զբամասները, բարձր քարակիր շէնքերը, սալալատակուած լայն ուղիղ մաքուր փողոցները, այլապէս ևս այլապէս բայց միշտ արեւմտաճի գրոշմը կրող բնակիչները, հաճելի ապաւորութիւն մը կը ձգեն մարդու վրայ:

Բայց ասոր հակառակ քաղաքին հին թաղերը — Մըսըր - Էլ - Աթիէ կոչուած — կատարեալ ֆէլլահական թաղեր են, նեղ օձապտոյտ փողոցներ, հողէ շինուած հին խարխուլ հիւղակներ, 20 ասնթիմեթր բարձրութեամբ աւազ ու փոշի, երբեմն այդ փողոցներէն անցած միջոցիդ տարօրինակ բան մը չէ եթէ աչքերդ հանդիպին ֆէլլահին — երբեմն էրիկ մարդ, երբեմն կին — որ պատի մը անկիւն կծկած ընտկան պէտք կը հողայ, աջքերը յանցապարտի պէս զէպի ատաջ խոնարհած. . . Հոտ մը կը բուրէ ամէն կողմէ որ հեռի է բուրումնաւէտ ըլլալէ, մէկ խօսքով նմանը չի տեսնուած աղտոտութիւն մը յատկանշական է այդ թաղերուն, այդ փողոցներէն անցելու համար բաւական զօրաւոր կամքի մը տէր ըլլալու է մարդ:

Երբ աղտոտութեան վրայ կը խօսիմ, անցողակի ըսեմ թէ՛ ֆէլլահը դադարաւոր չ'ունի ինչպէս մաքրութեան նոյնպէս ալ ամօթի վրայ, ամօթը ի-

րենց համար գոյութիւն չունի. թուրքերէն առած մը իրաւամբ կ'ըսէ, —

« Հէր եհրտէ այրպ »
« Մըսըրտա թայրպ »

Ուրիշ տեղ ամօթ նկատուած բան մը հոս հաշտ աջքով կը դիտուի Անգամ մը ընկերներէն մին՝ Կ. Պօլիէն նոր եկած՝ զարմացմամբ կը պատմէր ինձ թէ՛ փողոցներէ կ'ամանակ տեսած է ֆէլլահ չափահաս աղջիկ մը որ աղտոտ ջուրով սրունդը եւ այլն կը լուար. . . Արդէն ամէն օր օրինակներ չ'են պակսիր:

Եւ երբեմն զբուսաշրջիկներ, նորութեան հրապոյրէն մղուած, ինքզինքնին պահ մը տարբեր մթնոլորտի մը մէջ գտնուելու համար, կ'երթան այդ թաղերը, փողոցներ մէկ ծայրը եւ կամ ֆէլլահ սրճարանի մը առջև կը կենան, թուրք ու մատրոս ձեռքերնին, կը դնեն տեսածնին եւ կը պահեն խնամով. այսպէսով երբ ամբարն Անգլիա վերադառնան, զնոտանեկան շրջանակի մէջ քիթ օ'cloek տօթի խօսակցութեան պեղեցիկ համեմ մը պատրաստած կ'ըլլան, երբեմն ալ կը տեսնուի որ օրին մէկը գիրք մ'է հրատարակեր են այդ պատկերներովը զարդարուած:

Եթէ զբուսաշրջիկներուն մէջ կան այնպիսիներ որք կ'ուզեն մէկ քարով երկու թռչուն զարնել, որք թէ փափաքող են նոր եւ տաքուկ երկիր մը այցելելու եւ միեւնոյն ժամանակ կը տառապին կուրծքի հիւանդութեան, այդպիսիները ժամանակ մը հոս մնալէ վերջ կը փութան երթալ Հէլլուան, երկաթուղով գրեթէ մէկ ժամ հեռաւորութեամբ Գահիրէի մէկ արուարձանը, համբաւաւոր իր չոր ու մաքուր օդովը եւ իր հանքային ջուրերու բաղնիքներով:

Ձմրան քանի մը ամիսները հոս մնալէ վերջ զբուսաշրջիկները կը մեկնին դէպի վերին Եգիպտոս — Ասուան եւ Լուքսոր, չի մոռնալով հետերնին սանիւլ լուսանկարի գործիչները:

Շատ հաւանական է որ տարիներ վերջ երբ Սուեան մտնէ Արեւմտաքի ուղիին մէջ, երբ սոյ ճամբորդի մը համար հարկ եղած հանգստաւէտութիւնը, այն ատեն զբուսաշրջիկները պիտի սկսին հեռագեղէն նուազեցնել իրենց այս տեղի կայանը, աւելի լայն ժամանակ մը կարենալ տալու համար Խարթումի եւ Օմաուրմանի Բայց հետի ենք տակաւին այդ թուականէն, ինչպէս շատ մտաւոր ապագայի գործ չ'է բարեյուսոյ զլխոյ հա Գահիրէի երկաթուղիով միացումը:

Գ.

Ուրիշ երկիրներու մէջ չորոք եղանակ կայ, Եգիպտոս միայն երկու եղանակ ունի — ամառ եւ ձմեռ, առաջինը անգործութեան շրջան, իսկ երկրորդը օգեւորութեան եւ շահու. Եւ եթէ ըզբուսաշրջիկները լայն տեղ մը կը գրաւեն ձմրան տիրող այն գործունէութեան մէջ, կարելի չ'է զանց առնել սակեղ թէ՛ երկրին ունեւոր դասակարգը որ նոյնպէս նոյնմբերին կը վերադառնայ, կը բերէ նաեւ իր շարժումի բաժինը, Բայց այս բոլորէն վեր, այս բոլորէն դուրս կայ ու կը մնայ միշտ՝ նեղուր, Եգիպտոսի նախախնամութիւնը, որուն ջուրերը ջրամբարներու շնորհիւ աւելի բարեբար արդիւնքներ կուտան երկրին եւ աւելի արդիւնաւոր կ'ընեն բամբակի մշակումը:

(Շարունակելի է)
ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

ԱԶԳ

Յրուիլի՛ մը եւ Գործակալներու պէտքը կայ:
Դիւնը Խմբագրութեան հասցէիւ:

ԲՈՂՈՒՔ

Միքի ե՛ս միայն պիտի գրկուած մնամ, Հաւաքարհային կենսասու յոյսեմ. Ե՛ն սոսկ անբաժին շինիմ ցոյգերեմ՝ Որոց հաւար « ա՛խ » ֆաշիւ յարածաւ:

Ձի տուած ինձի վերնային նրարան՝ Որով վայելիւ սուրբ իրաւունքներ. Եւ չի փաշտեց իմ սասքոյ յ'երթ. Դաշտերու միջեւ, գուարք լ'անս սննան:

Բայց ո՞վ է տուոյ՛ այն վեհ հրաւաններ, Որով դարձրեց իմ բարդի նաւակ. Հիւսիսի ֆակտորի անուրջներու հաւան, Ինտերնոյ դժոխ, շակեր ու կայծեր:

— Հոն կայ, այո՛, մի աներեւոյ ձեռք, Որ կը խաւերեցեմ հողույն իմ վարդի, Մի եսկ կայ անո՛՛ եսկ մը շուս վեր, Որուն չեմ կարող հասցնել իմ խելի:

Այլ այն անծանօթն այնքոյ որտեղեմ, Մարդ մը որ թեւտ մեր վիսուն վերեւ եւ քաղնուէրով սասքերի յետեւ Գողանայ ծաղիկով հողոյս պարեկեմ:

Բայց մարդ չի կարող քոչիլայնարանով, Եւ ոչ հողեղեմ մի այլ արարած՝ — Այնքոյ կայ քաղնու մի շակերով Ասուած, Որ չի՛ տար յոյսեր՝ յոյսեր՝ այլ երկունքի:

Ո՛հ, այժմ կը սեւեւել վերեւ մի անսեւ Բոցեղեմ անքիւսի եւ հողի զինուած, Անպերեւ անդին փայլալող Ասուած. . . Դողողոյս հողիս սխաւայ զոգցեմ. . .

« Զե՛ւլ սեւեւեր գեղ, ո՛վ երկնաբանի, Դասասաններեդ եւ չեմ հասկնար. Ձի կրցայ սեւեւը գործերդ սրդար, Եղածներ ցասուել, վրեժ եմ միսի »

Երկ սրդարեւ մի հող Ասուած, Կայ արիւնյն շողեմ, սասքերեմ անդին, Բունեւ մարդիային բարդի ղեկ ձեռքի՛ս՝ Թող բանայ աջը սեւեւ իմ սիրս բաց:

Սիրս բաց է, այո՛, պարզ եւ անսարս. Մոսայ խոնկեր ալիսս բնախին, Ձիք հոն բնակած խոկեր միսին, Բայց չի տեսայ որ՝ հողերեւ ազուս:

Այո՛, չի տեսայ եւ մի օր ազուս, Մի օր վիրաւոր սիրս գաբար, Եւ կաւ սապարեգ դառնայ փորորիկի, Մեր կուրծք ճնշուած, մեր եւ յուսանս

Իսկ թե երկարիւն միջեւ հուշկ վայրկեան, Տխարի կեանքիս կըսեմ պատկերներ, Եւ պսակն հողիս խաւար սուրեւեր, Պե՛տ չե՛ ինձ Ասուած, ո՛չ այ ԱՊԱԳԱՆ

ԳԻՍԱՒՈՐ (Գ. Թ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՄԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐՕՆԻ ԽՆԴԻՐԸ Ի ՅՐԱՆՍԱ

Տիւրքի վերաքննիչ ատենադ հօր մը բողոքին վրայ վերջերս դատապարտեց ուսուցիչ մը իր անկրօն դատ բացած էր այդ ուսուցչին դէմ թէ՛ իր անկրօն գաղափարներով բարոյապէս վնաս կը հասցնէ իր կըրթութեան յանձնուած աղջի:

Խնդիրն արձագանգ դառաւ մինչև երեսփոխանի ժողով, և Ֆրանսական պահպանողական լրագիրներն զրուատեցին դատարանին վճիռը:

Երեսփոխան արմատական Պ. Տէ. սուա, որ հեղինակ է կըրթական դործերու, դէմ խօսեցաւ դատարանին վճիռի և յայտարարեց թէ՛ եղածը պարզապէս սկիզբն է շարժումի մը ընդդէմ աշխարհական կըրթութեան և զուտ աշխարհական կըրթութիւն տուող վարժարաններու դրութեան: Պ. Տէ. սուա ըսաւ թէ՛ այսպէս կազմուած են հայերու ընկերակցութիւններ, քահանաներու նախագահութեան ներքեւ և կը հսկեն աշխարհական վարժարաններու վրայ. ասոնք կը հալածեն այնպիսի վարժարաններու ուսուցիչները, ստիպելու համար զանոնք որ կրօնական կըրթութիւն տան: Եպիսկոպոսները կ'օգնեն այս ընկերութիւններուն, և կը հայթայթեն հայերու կողմէ բացուած դատարան ծախքերը: Կըրթիկ թերթեր կարգացողները գիտեն արդէն թէ՛ իրօք այսպիսի շարժում մը սկսած է, որովհետեւ այս թերթերը ընդարձակ տեղեկութիւններ հաղորդեցին աշխարհական կըրթութեան դէմ բացուած պայքարին վրայ: Պ. Պալան յայտարարեց թէ կառավարութիւնը վճարեկ ատենին պիտի ներկայացնէ Տիւրքի վե. րաքննիչ ատենին վճիռը. « որովհետեւ կառավարութիւնը երբէք միտքէն չ'անցնէր քաղաքներէ այսպիսի ձգտումներ »: Պ. Պալան յայտարարեց նաեւ թէ՛ կառավարութիւնը գիտէ որ Ֆրանսական գիւղերու մէջ հայերու ընկերակցութիւններ կազմուած են: Հայերը իրաւունք ունին ընել ինչ որ յարմար դատեն՝ օգնելու համար ուսուցիչներուն, որոնց յանձնած են իրենց զաւակներուն կըրթութիւնը, բայց երբ կառավարութիւնը տեսնէ թէ հայերը շարունակ ընդդիմութիւն կը յարուցանեն ուսուցիչներուն դէմ, ապա ապա պիտի միջամտէ, ուսուցիչներուն իրաւունքները պաշտպանելու համար:

(Բազանդիոն)

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ե Ա Ր Ր Ր Ր

ՆՇԱՆԱԽՈՒԹԻՒՆ

Ամսոյս 11ին Շաբաթ օրը Ա. զէքոսանդրիոյ Պատ. թող. խորհրդոյն Ատենապետ Վսեմ. Աբրահամ Բաշա Բարթոլի որդւոյն Ազն. Յակոբ Պէյ Բարթոլի նշանախօսութիւնը տեղի ունեցած է՝ ընդ Օրիորդ Աննա Ներսէսեանի:

Օրիորդ Աննա՛ դուստրն է հանգուցեալ Ներսէս Պէյ Ներսէսեանի. եւ իր մօր Ազնուափայլ Տիկին Նարթիկի խանդակաթ սիրոյն և պաշտաման միակ առարկայն ըլլալով՝ օրինակելի դաստիարակութիւն մը ըստացած և փայլած է բարձր դասուիդական սեռի ներկայացուցիչներուն մէջ:

Ազն. Յակոբ Պէյ Բարթոլի համակրելի տիպար մը հայ երիտասարդներու՝ զինքը մօտէն ճանչցող:

ներուն՝ ինչպէս նաև գործի աշխարհին մէջ մեծ յարգանք կը վայելէ, և տարիներէ հետէ իր աշխատութեան մասնաւոր բաժինը նուիրած է Աղէքսանդրիոյ աղքատախնամ ընկերութեան, որ իսկապէս նախախնամութիւն մ'ը եղած է կրնանք ըսել ամեն անոնց համար, որոնք բաղդին հարուածներուն ներքեւ անոր օժանդակութեանը գիտելու պէտքը զգացած են:

Արշալոյս ի Խմբագրութիւնը իր ջերմագին շնորհաւորութիւնները և անկեղծ խնդակցութիւնները կը զրկէ առ Վսեմ. Աբրահամ Բաշա և առ Վսեմափայլ Տիկին Երանուհի փաշա Բաթոզ և երջանիկ ու բարեբաստիկ օրեր կը մաղիէ սիրակցորդ ամուլին:

Ս. ԾՆՈՒՆԴԸ

Արդէն եղած ծանուցման մը համաձայն Շարաթ երեկոյ և Կիրակի առաւօտ Ս. Ծնդեան երգեցողութիւնները կատարուեցան օղիակի ընկերակցութեամբ, քույրքիս Ս. Աստուածածին Եկեղեցւոյն մէջ:

Տիար Լևոն Խանճեան, որ յատկապէս հրաւիրուած էր Երաժշտութեան մասնակցելու, թէպէտեւ ինչպէս ձայնական նոյնպէս ալ գործիական երաժշտութեան զանազան ճիւղերուն մէջ անուրանալի արժանիք և մեծ համբաւ կը վայելէ ամենուրեք, սակայն առաջին անգամը ըլլալով զօ՛ր թողուցած է՝ երևար ունկնդիրները, և ինչպէս կը տեղեկանանք՝ եղած են նախանձախնդիր աղքայիներ ալ, որ մինչև իսկ ներշնչացած են երգեցիկ տղայոց ինչպէս նաև Օրկանին վերնատան մէջ գլորուած ըլլալուն համար:

Թերևս այս ըլլալ գլխաւոր պատճառներէն մին՝ որ լաւ տպաւորութեան ներքեւ մեկնած չեն բարեպաշտ հաւատացեալները:

Փակագիծ մը այս տեղ. ուրիշ տեղեր ուր եկեղեցւոյ և պաշտօնէից հասոյթներն անբաւական են, եղած քննադատութիւններուն առջև տեղի տալով, գրեթէ բոլորովին նուազեցուցած են պնակի շքրջագայութեան սովորոյթն. մինչդեռ հոս եղած զանգատներէն կը հետևեցնենք թէ դեռ նոր կ'սկսի և կը զարգանայ պնակաշքրջութեան վաճառականութիւնը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐ

ՄԱԹԱՐԻՅԷԻ ՈՃԻՐԸ

Ոստիկանութիւնը մեծ փութով յառաջ կը տանի Մաթարիյէի ոճրոյն քննութիւնները:

Երեք ամբաստանեալները՝ մէկը տանապետ - որ ինչպէս ըսուեցաւ Ապպասիյէի թնդանօթածիգ զօրաց հինգերորդ դնդին կը պատկանին, խիստ հսկողութեան ներքեւ կը գտնուին և իրենց ոճիրը գրեթէ խոստովանած են:

Շ. Խուրիի ընտանիքին անդամներուն ըրած յայտարարութեան նայելով, ոճիրը գործուած օրը 800 ոսկիի չափ գրամ կայ եղեր քովը:

Կառավարական սովորութեանց համաձայն, Տր. Նօլանի և ուրիշ բժշկաց միջոցաւ տեղի ունեցած է դիագնոստիկանը, որ արտակարգ և սրտախոշոշ յատուութիւններ երեւան կը հանէ:

Նախ՝ բժիշկները կը հաստատեն թէ՛ այսպիսի սոսկալի սճիր մը երեք հոգիէ պակաս թուով մարդոց ձեռքով կարելի չէ որ գործադրուի: Ուստի կը հետևեցնեն որ սճրագործներէն մին պինդ բռնած է զՏիկին ձեռքերը և ուրիշ մը հարուածներ տեղացուցած է անոր վրան մինչև մարելու աստիճանին հասցնելը, իսկ երրորդ մը լաթով մը բոլոր ուժովը սեղմած է անոր կուրորդը: Բնական է որ իր սպանիչներուն ձեռքէն աղատելու համար մահամերձ Խուրի զօրաւոր ջանքեր ըրած է, սակայն անօգուտ:

Գարձեալ, կ'ըսեն բժիշկները, զժբաղդ զոհը շուտով աւանդած չէ հոգին, այնպէս որ ոճրագործները զայն երեսի վրայ աւազին մէջ պառկեցուած և անոնցմէ երկուքը անոր վրայ նստած են, մինչ երրորդը փոքր պեղելով զբաղած է: Աւելի սոսկալին այն է որ երբ ոճրագործները կենդանութեան նշան տեսած են անոր վրայ, մահը փութացնելու համար կ'ընակի վրայ դարձնելով քար մը թխմել ուղած են անոր բերանը, և այս գործողութիւնը դիւրացնելու համար ուրիշ քար մը իւր մուրճ գործածած են, ու այսպէս խեղճ գոհին լեզուն բոլորովին հանուած է տեղէն:

ՁՈՒՐԻ ԽՆԴԻՐԸ

Ռօտ - Էլ - Ֆարակի արթեղեան հորերուն պարունակած շուրերուն առողջապահական տեսակէտով ունեցած յատկութիւնը խնդրոյ տակ ինկած ըլլալով, մինչև ցարգ քանիցս բժշկական քննութիւններ կատարուեցան և տեղեկագիրներ պատրաստելով ներկայացուեցան առ անկ էր, սակայն որոշ եզրակացութեան մը չ'կրցան յանդիլ:

Այս անգամ արդէն ներկայացուած տեղեկագիրներուն մէջ զըտնուած կարճիքներու տարբերութիւնները ճշտելով վերջնական եզրակացութեան մը յանգելու համար, բժշկական ընկերութեան Ատենապետ Վ. Տր. Վարտնօֆի առաջարկին վերայ ականաւոր բժիշկներէ կազմուած քննիչ մասնախումբ մը մեծ եռանդով առաջ կը տանի իր ուսումնասիրութիւնները:

ԴԷՊԻ ՀԷԼԻՓՈԼԻՍ

Անցեալ հինգշաբթի օր Հէլիօքսիոյ Ովասիսի ընկերութեան նոր շինել տուած թրամվէյի գիծերուն գործնական մէկ փորձը կատարուած է, յաջող արդիւնք մը տալով: Կը յուսացուի թէ մօտ օրերու մէջ անոր պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

— Ռուսո - ճարտնական պատերազմի ատեն Յու - Շիմաի ճակատամարտին մէջ զիտակցաբար գործուած սխալներու ամբաստանութեամբ բերդարգելութեան դատապարտուած ծովակալ Նէպոկաթօֆ, նոր տարւոյ առթիւ ներման արժանացած է:

— Լոնտօնէն ստացուած տեղեկութեանց նայելով, Կոմսուհի Յէրմոսթ, քոյրը միլիտանտէր Հարրիթօր, սրուն դատաւարութիւնը ամբողջ Միացեալ Նահանգաց բնակչութիւնը հետաքրքրեց ու կը հետաքրքրէ տակաւին, ամուսնալուծման դատ բացած է իր էրկան կոմս Եէրմոսթի դէմ:

— Ռուսիոյ Չարին ժողովուրդէպի Խալիա այցելելուն համար շրջած զըրոյններուն հետեւանօք, Հրուսի ընկերակցական և հանրապետական քսան երկու ընկերութիւնները մեծ Միթինկ մը գումարելով որոշած են յուզումաւից ցոյցեր կազմակերպել, բողոքելու համար այս այցելութեան դէմ:

Գերմանիոյ Կեյլօմ Բ. Կայսրը, որ քանի մը տարիներ առաջ Ֆէմենիսթ տիկիններու կողմէ իրեն եղած հարցումներուն տուած պատասխանովը իր վրայ խօսիլ տուաւ, այս անգամ ներկայացած առիթէ մը օգուտ քաղելով՝ իր դէպի գրագիտունները ունեցած պաղ վերաբերումը կը յայտնէ:

Սր մը թագուհւոյն պատուայտի, կինին - Էլէնի - որ իր սիրուհւոյն նման գրականութեան սիրահար է եղեր, ուղղելով խօսքը, կ'ըսէ անոր:

— «Իւր շատ աղին էք, չափազանց աղին, այնպէս որ չ'պիտի ուզէի հաւատալ թէ՛ գրագիտունի մ'էք:»

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Տրայիկն 18 Յունուար. — Երկու սեռէ 500 հոգիէ բաղկացած անթոխ մը Գրակի մէջ պաշարեց բարապետի մը ընկերացող ֆասնի չափ զիւնտրները: Անթոխը այս վերջիններուն հետ շատ գեշ վարմեցաւ և ցեխերուն մէջ քարխեց զանոնք: Նստիկանութեան ֆանի մը դեմքին վրայ վերջ մը ստացաւ: Չարագործները պատանդեցին կոյնագիրները:

Բարիկ 18 Յունուար. — Սր Է. Գալթի Պեկրմէն հոս հասաւ, և Կեն ժամու չափ սեսակցութիւն ունեցաւ Պ. Գրեմանտի և Բիշօփի հետ:

Թոֆիօ 18 Յունուար. — Ճարտն կը պնդէ իր մտածման վրայ, Չիւնու դէպի Մանչուրի կառուցանելու որոշումը կ'ընդունի իր քիչ քիչ արժանի ընկերու համար, առարկելով

թէ՛ առիկայ Բէֆիլի մէջ կնկուած պայմանագրին տրամադրութեանց հակառակ է: Ճարտն կ'պատուաւորացաւ իր զարեցնելու քոնի դարեցնելու երէ սկսուի:

Հոտ 18 Յունուար. — Ասիս Ապպասէն Իսաիոյ ներկայացուցչի զարկած մէկ հեռագիր կը ծանուցանէ թէ՛ երկուրդ սեսակցութիւն մը ունեցած է Մեկեղիփ կայսեր հետ և այս վերջինը պատանդեցուցած է զիւնտր պէտք տղած անկիցական հրամանները տուած է Իսաիոյ ներկայացուցչին ճարտարութիւնը անվստահեցնելու նմանապէս համար:

Սօվիա 18 Յունուար. — Խորհրդարանի իր հրատարականք մատուցեց:

Բարիկ 18 Յունուար. — Պ. Բիշօփ և նախարարաց Խորհրդոյն ծանուցեց թէ Պրանսա և Սպանիա կատարելապէս համաձայն են Մարտիեան ֆառաքականութեան մէջ:

Թանճեր 18 Յունուար. — Խառնաշփոթութիւնները կ'աճին Էնսի մէջ: Կողպուսները կը շարունակուին Ս. պատերազմի յայտարարութիւնը եղած է Մարտիէի մէջ:

Միլան 19 Յունուար. — «Սեզօյ» կ'ըսէ թէ հաւանական է որ Վիգոր Էմմանուէլ քաղաքորդ 1908 տարւոյ մէջ պիտի այցելէ Բարիկ, Լոնտրա և Կ. Պօլիս:

Ճիսսէ 19 Յունուար. — Կրծանոցի թէ՛ ֆօլթրան ուխտարեւոյն մէջ օրական մօտ 200 հոգի կը մեղցնէ:

Ս. Բէքրայուրի 20 Յունուար. — Բարիկի մէջ կ'իկն մը և մարդ մը մերթախարեցան, որոնք Տեորեւոր խումբի մը կարեւոր անդամները կը կարծուին ըլլայ: Աստի վերջին Յունուարի անոնց մէջ Թիւրքիոյ կողպուսները որսնաւոր վստահեցան պատանդակած որսնաւորներէն կը փոխանակուին Էդեր Բարիկի մէջ:

Գարձեալ Միլանի մէջ մերթախարեցան եւ երկու մարդ և կ'իկն մը միտեղոյն պատանդակեալ մէջ:

Ոստիկանութիւնը մեծ կարեւորութիւն կը կրծայ այս մերթախարեցանքը:

Լոնտրա 20 Յունուար. — Սր Է. Գալթի Պեկրմէն հոս հասաւ:

Ճիսսէ 20 Յունուար. — Բօլթրան կատարի կերպով կը յառաջանայ: Օրական 400 մահեր կը պատահին:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահերէ, Տ. Ա. — Ստացուած է Ձեր նամակը: Ձեր առաջարկները նկատողութեան առնուած են և ընդունելի ըլլալու համար պէտք եղած կարգադրութիւնները պիտի ըլլան ի մօտայ:

Աղէքսանդրիա, Ա. Մ. — Ձեր գրածներուն մէկ մասը միայն ստուգութեան մօտ է: Նամակի վերջին մասը բոլորովին անհիմն զրոյցներ են: Այդ խնդրոյն համար պէտք եղած տեղեկութիւնը ստանալու համար՝ միակ մեջ ջոցն է՝ ուղղակի աղբուրին դիմել, և ոչ թէ մեզի:

Աղէքսանդրիա, Գ. Մ. — Միտիայն տպագրական գործիքներէն մնացածները ստացած է տակաւին: Թղթեր, գրքեր, գրութիւններ ևն. Աղբուրին Առաջնորդարանի տրամադրութեան տակ կը գտնուին մինչև այսօր, հետեւաբար հիմայ կարելի չէ Ձեր խնդրանաց գոհացում տալ:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵԹՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՂՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարոններու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամալաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայց մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւորապէս գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած Եւրոպացիներէ օրրատօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՏՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պավարի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից
Հին ԵՒ ՆՈՐ ՍԵՆՍՐԶՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԾԻԿԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են ևւ ստոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսյական ևւ մեքայներով վարձատրուած, Եւրոպայի ամենալաւ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁՍՏՐՈՒԹԻՒՆԸ
Ա.Բ.Ջ.Ի.Ն ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԿՏԻՎԱՊԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
Իւրաքանչիւր մեքենայի
վրայ Սինկլեր յանդակներն



Դին ՉԱՓԱՒՈՐ

Չրի դասեր և նորոգու-
թիւններ, Սինկլեր մեքենա-
յից համար, յաճախորդաց
ստաներուն մէջ .

Վճարմանց գերութիւն

Փոխանակութիւն հիւներու
ևւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ՄԵՐԸ ՅԱՐՈՒԹԻՒՆ Լ . Ս . ՅԱՍԼԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Հաստատուած է Շարա Ապա-Էլ-Ազիլ, Կալէնդի թատրոնին դէմը .
Խորհրդակցութիւնը, բացի կիրակիէ, ամէն օր ժամը 4 Էն 6 (Յ . Մ .)

ՄԵԾ ՍԲԻՆԻՍ ԼԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սայն Մոնարանը որ Միսսէ էլ Խազնէսարի օգասուն հրապարա-
կին վրայ կը գտնուի, իր մաքուր ևւ ընդարձակութեամբ սեսակին
մէջ յարմարագոյններէն մին է հանգստանալու ժամանակ անցնելու .

Մոնարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զատ
հոն պիտի գտնուի նաեւ շաւարանի ընկերներ, նոր ևւ ընտիր պիւրատո-
ներ ևւ անբի սպասարկութիւն .

ՍԵՓ ՀԱԿԱՆԱՏԵՐ
ՄԻՍՍԱՔ ՍԱՐԿԻՍԵԱՆ

ՏՐԲ ԵՍՏԵՐ Լ . ՃԷԹՈՊԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ . ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն
վիսյեալ ևւ անուանի հիւանդանոցնե-
րու մէջ գործնական փորձառութիւն
ստացած բժշկուհի . յալողակ վի-
րահատ՝ ենթակային առանց ցաւ
պատճառելու :

Մանկարարուհի ևւ մասնագէտ՝
կանանց ծննդական գործարաններու
ևւ ախրողութեան արտերու, իսկ մա-
նուկներուն՝ ամէն տեսակ հիւան-
դութիւններու :

Կատարեալ խնամքով ևւ գի-
տական նորագոյն մեթոտներու շնոր-
հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց
յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր առա-
ւօտեան ժամը 9-11 ևւ կիս օրէ յետոյ 2-5

Ամէն երեքօրի աղանոց ձրի
զարմանում :

ԾՄԱՌՈՒ ԳԻՐՔԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մասենադարանի գր-
քոյկներուն հեղինակն է Տ . Ա . Պալ-
եան, եգիպտահայոց քաջ ծանօթ իր
հրատարակութիւններով ևւ յօդուածնե-
րով . Թրքուհին պատկեր մ'է Ուրֆայի
կոտորածին, ևւ Հիւլէն եգիպտազաղթ
հայութեան առաջին օրերուն մի ման-
րանկարը յեղափոխական գործունէու-
թեանց վրայ խորհրդածութիւններով .
Դիմել « Արշալոյս » խմբագրութեան
էամ ուղղակի հեղինակին, հետեւեալ
հասցէով :

A . BALIAN

(Egypte) Le Gaire

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ-ԱՉԻՉ
ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տարագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ .
Նամակաղլուխ, ազգարարութիւններ, այցելարտեր, մահազներ,
գիրքերու ևւ պրոչիւրներու տպագրութիւններ ևւ այլն :

Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է,
իսկ մնացեալ կէսը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի է .
Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտաբանութեամբ պիտի կատարուին :

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ